Զ. ՏԱՐԻ — ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ 6 ՕԳՈՍՏՈՍ 1903 — Թիւ 540

ԱՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տլր.
Վեցամսեայ 1.50 »

Ռանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ վերջին երեսի համար 20 սանթիմ։ Երեքից աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ։

Վաճառման համար ձեռքէ 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀԱՐ Տ՝ԲԱԿՈՒԻ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակներ և դրամ ղրկել խմբագրութեանս հասցէին։

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքէ
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռքէ
)(15 ՍԱՆԹԻՄ)(

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՄԸ ԲԱԺՆԵՑԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՈՎ ՊԷՏՔ Է ԼԻՆԻ ՍԵՐ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Սրանից երկու տարի առաջ երբ առաջին անգամ բարձրացաւ առաջնորդական խնդիրը «Շարժումի» մէջ մի քանի յօդուածներ գրվեցին այդ առթիւ։ Տողերիս գրողը առաջնորդութիւնը օգտակար էր գտնում միայն մի պայմանով, այն է թէ նա պէտք է լինի մեր երկրի և կեանքի պայմաններին յարմար ներկայ ժամանակի պահանջները ըմբռնող մարդ, իսկ մեր բարեկամներից մէկը, Միրզա Ալանեան պատասխանում էր որ Բուլգարիայի պէս ազատ երկրում, ուր աշխարհականները կարող են գաղութի ներքին գործերը կանոնաւոր վիճակի մէջ դնել, առաջնորդի պէտքը չկայ և նա միայն աւելորդ բեռ պէտք է լինի մեր փոքրիկ գաղութի համար։ Մենք սկզբունքով համամիտ էինք մեր ընդդիմախօսին, բայց գործնական կեանքը սաիպում էր հաշուել առաջնորդ ունենալու հետ, որովհետեւ մեր գաղութին մէջ պակասում են այն զարգացած, հեղինակաւոր աշխարհականները, որոնք կարող պէտք է լինէին մեր ներքին գործերը կանոնաւոր վիճակի մէջ դնել, իրենց շուրջը համախմբելով գաղութի լաւ ու գիտակից մասը։

* * *

Կրկնենք մի ճշմարտութիւն, որը շատ վաղուց յայտնի է։ Դժբախտ է այն ժողովուրդը, որի կեանքի մէջ հոգեւորականութիւնը ղեկավարող դեր է կատարում, ուրեմն հայերս ամենադժբախտ ժողովրդներից մէկն ենք, որովհետեւ հոգեւորականութիւնը միշտ վարիչ դեր է կատարել մեր կեանքի մէջ, ու իր քէֆի ուզածին պէս վարել է մեզ և դեռ վարում է մեր կամքին և տրամադրութիւններին հակառակ, որովհետեւ պաշտօնական աշխարհի առջեւ հայ ժողովուրդը ներկայացնող միակ կազմակերպված ու ճանաչված մարմինն է հանդիսանում։

Մեր հոգեւորականութիւնը այսօր, մեր խարխուլ ու ցիրուցան վիճակում իր վարիչական դերում մի չարիք է, որին մենք գիմանում ենք ստիպված, որովհետեւ հնարաւորութիւնը չուենենք նրա այդ դերին վերջ տալու և նրա տեղը մի ուրիշ մարմին դնելու։ ուստի այդ չարիքը մի քիչ թեթեւացնելու, նրան մատամբ բարիքի վերածելու համար մենք պարտաւոր ենք մեր ներքին գործերի ղեկը յանձնել այնպիսի կղերականների, որոնց սիրտը բաբախում է ժողովրդային ցաւերի հանդէպ, որոնց ուղեղը ընդունակ է ըմբռնել թէ թէ ներկայ ժամանակում մեր ժողովրդին կորստեան դռներից ազատելու համար ինչ միջոցներ պէտք են։

Այս պայմաններին համապատասխանող հոգեւորականներ ուենե՞նք մենք։ գրէթէ ոչ։ կամ շատ քիչ։ Ուրեմն ո՞րտեղից պէտք է գտնենք առաջնորդ Բուլգարիայի հայերի համար։

Պատրիարքարանը ընտրելիների եռանուն ցանկ է ներկայացրել մեզ։ դրանք են Ներսէս եպիսկոպոս Ասլանեան, երբեմն Վանի առաջնորդ, ամենածանր ժամանակներում, Աղաւնունի և Վահան Տ. Յակոբեան վարդապետները։ Վերջինս ինքն է եկել Բուլկարիա, առ այժմ իբրեւ փոխանորդ, առաջնորդական խնդիրը կարգադրելու։ թէեւ ամենայարմար և անյարմար առիթի յայտարարում է որ այդ գործի մէջ սանտիմ չունի և իր գլխաւոր փափագն է առաջնորդական խնդիրը յաջողցնել։ բայց պարզ է որ «սանտիմ» ունի, որովհետեւ ինքն էլ է գանվում ընտրելիների ցանկի մէջ։ եթէ չունենար ցանկը պատրաստողներին կը յայտարարէր, որ ինքը առաջնորդական պաշտօնից հրաժարվում է, բայց սիրով կերթայ այդ գործը գլուխ բերելու։ Ուրեմն, քանի որ ընտրելութիւնից չէ հրաժարվել, պարզ է որ «ոչ միայն սանտիմ, այլ անհամար սանտիմներ ունի։

Այդ ապացուցանում է և նրա հապճեպով գործելը։ թէեւ այդ աճապարանքը բացատրում է նրանով, որ պէտք է մինչեւ Բուլգարական ազգային ժողովի բացումը ամեն բան պատրաստ լինի և առաջնորդը ընտրված, որպէսզի կառավարութիւնը իսկոյն հաստատէ առաջնորդութիւնը և իր գալիք տարվան բիւտճէի մէջ մտցնէ և հայ առաջնորդութեան տրվելիք գումարը։

Մեզ թվում է որ այդ աճապարանքը տեղի է ունենում միայն ժողովրդին ժամանակ չը տրվի, որ նա միջոց չունենայ ընտրելիների խնդրով լրջօրէն զբաղվելու։ Մեր կարծիքով աւելի լաւ էր մի տարի եւս առանց առաջնորդի մնալ և այժմ միայն աշխատել կանոնաւոր պատգամաւորներ ու ընտրելիներ գտնել, քան թէ հապճեպով ժողովրդի գլխին փաթաթել այնպիսի մէկին, որը իրապէս բեռ ու ցաւ կարող է լինել ու մեզ ստիպել երանի տալ առաջնորդ չունեցած ժամանակներին։

Շատ լաւ, հաշվենք Վահան վարդապետի առաջնորդ լինելու ունեցած փափագի հետ, ղեկավարվելով ռուսական այն առածով, որ ասում է «լաւ չէ այն գինուորը, որը զօրավար դառնալու փափագ չունի»։ բայց զօրավար դառնալու համար այդ կոչումին յարմար ընդունակութիւններ պէտք է ունենալ։ ինչպէս և վարդապետին առաջնորդ դառնալու համար այդ կոչումին յարմար ձիրքեր։

Վահան վարդապետը՝ ընտրութեան գործը գլուխ բերելու համար աշխատող ընտրելին Բուլգարիոյ առաջնորդ լինելու ձիրքերը ունի՞։ Մենք, ձեռքներս խղճերիս վրայ դրած՝ կասենք ոչ։

Այստեղ տրամագիր չենք խօսելու վարդապետի պակասութիւնների մասին, որոնք մեզ հասնում են Պոլսից մեր արած դիմումների հիման վրայ, ու մեր ստացած մի քիչ լաւ տպաւորութիւնն էլ թուլացնում են։

Ուրեմն ո՞րին պէտք է ընտրել։

Մենք հրաժարվում ենք թեկնածու առաջարկել, որովհետեւ միւս ընտրելիներին չենք ճանաչում, իսկ մեր ճանաչածներին չենք առաջարկում, որովհետեւ համոզուած ենք որ ոչ պատրիարքարանը և ոչ էլ Թուրք կառավարութիւնը թոյլը կտան մեր ընտրելին այս տեղ գայ։

Մենք չենք ուզում առաջնորդական գործը վտանգել, միայն դէմ ենք և Վահան վարդապետի ընտրուելուն։ Թող ժողովուրդը իր գլխի ճարը տեսնի և այնպիսի պատգամաւորներ ընտրէ, որոնք իրենց քէֆերը չեն տայ Վահան վարդապետին, և կը ղեկավարվեն ոչ թէ իրենց քմահաճոյքով, այլ ժողովրդի շահերով։

ՎԱՐԴՕ

ԿԵՆՍԱԿԱՆ ՀԱՐՑ ՄԸ

Վերջերս՝ Ցիւրիխ հրատարակուող ընկերվարական կուսակցութեան օրգան «Վոլֆսռեշդ» ի մէջ երկար առաջնորդող յօդուած մը կարդացի, ոյուն հեղինակը հաւանաբար հայ ընկերվարական մը պէտք է ըլլայ։

Յօդուածագիրը նորերս Ռուսասան տեղի ունեցող գործաւորական զանգուածային հսկայական շարժումներուն և խռովութեանց վրայ խօսելով բոլորովին ոգեւորուած և լիայոյս կը թուի Կովկասեան սոցիալիզմի ապագայ յաղթանակի մասին։ Արդարև այն միահոգոյն գործադուլները, Պագու, Թիֆլիզ, Պաթում, Օտեսայ, ապացոյցը տուին զարմանալի համերաշխութեան և կազմակերպական հրաշալիքի, և այն ամենաշատը 7-8 տարուայ մէջ։

Այդքան արագ ևհսկայ յառաջդիմութիւն այստեղ, Եւրոպա, անսպասելի էր, ատոր համար ալ մեծ հիացմունք առաջ բերաւ այս տեղի ընկերվարական շրջանակներու մէջ ու ամբողջ Եւրոպայի ուշադրութիւնը գրաւեց պահ մը։

Ահա այդ դէպքերը պատեհ առիթ

համարելով, յօդուածագիրը չէ մոռցած Հայերու մասին ևս խօսիլ։

Թուրքիկ ակնարկ մը ձգելէ յետոյ Հայ—Ռուսական պատմական յարաբերութեանց վրայ կը մատնանիշէ թէ ի՞նչպէս Հայերը երկար ժամանակ իրենց փայփայած յոյսին—այն է տեսնել Ռուս պետութեան մէջ Հայ ցեղի պաշտպանն ու ապատարարը—չարաչար պատրանքը ապրեցան։ Յետոյ խօսելով Ռուս կառավարութիւնը բռնած ներկայ խուժդուժ և տմարդի քաղաքականութեան մասին հանդէպ բոլոր Կովկասեան ցեղերու, որ ռուսացման անորակելի լուսնոտութենէն բռնուած կը ճգնի ամէն մարդկային ու բնական օրէնքներ ոտնակոխ ընել, կը ծանրանայ մասնաւորապէս Ռուս կառավարութեան Հայերուս նկատմամբ բռնած ներկայ վանդալական քաղաքականութեան վրայ։

Մի առ մի կը թուէ բոլոր այն աւազակութիւններն ու անիրաւութիւններն զոր Հայերը անմոռնչ, բայց ցասումն ի սիրտ կրեցին. դպրոցներու փակումը և անոնց կալուածներու գրաւումը Հայ եկեղեցական կալուածներու յափշտակումը, Հայ մամուլի վրայ դրուած անտանելի գրաքննութիւնը։ բարեգործական և հրատարակչային ընկերութեանց ջնջումը և հասարակական պաշտօններէ Հայերու վտարումը։

Այդ բոլոր ճիգերը կ'ըսէ ո՛չ միայն չյաջողեցան Հայերը ռուսացնել այլ և մեծապէս զարկ տուին ազգային արժանապատուութեան և գիտակցութեան զարթումին, և այս օրուայ գործաւորական շարժումը. Պագու, Թիֆլիզ, Պաթում, Օտնասայ տեսակ մը արձագանքն են Գոլիցինի հետևած վայրագ քաղաքականութեան։

Այս տեսակէտը կասկած չկայ որ ճիշտ է և ամէն Հայու համար ակներև իրողութիւն մը. սակայն հեղինակը աւելի հեռուները գնալով կը կարծէ Էնգէլսի հետ թէ «Հայ ցեղի ազատագրութիւնը միայն ցարիզմի անկումին մէջ կը կայանայ» ու ցարիզմի անկումը իհարկէ սոցիալիզմի մէջ։

Ահա տեսակէտ մը որ այսօր մեր Ռուսահայ երիտասարդութեան մէկ ստուար մասին կը պատկանի, ասոնք մեր Հայ ընկերվարականներու իմբակը կը կազմեն։

Հարցը վերին աստիճան կենսական է և ծանրակշիռ ու կարժէր որ հրապարակաւ լուրջ քննութեան ենթարկուէր, որպէսզի մեր ժողովուրդն ալ կարենար իր դատողութիւնն ընելով բռնելիք դիրքը որոշէր. քանի որ այսօր ազգային ազատագրութեան հարցը երկճիւղած է։

Երկու տեսակէտներ դէմ դիմաց կանգնած են այժմ, յեղափոխութիւն և ընկերվարականութիւն. երկու ճանապարհ, ո՞րնէ չիտակը՝ ո՞րով պէտք ընթանալ, ո՞րը աւելի շուտ և ուղիղ իր նպատակին կը դիմէ։

Հարցեր որոնց պատասխանը տալ իմ ձեռնհասութենէս վեր կը գտնեմ. ու զիս երջանիկ պիտի համարէի եթէ այն քանի մը դիտողութիւններս զոր այս առթիւ պիտի ընեմ, պատճառ դառնային զիտակից վիճաբանութիւն մը բանալու։

* *
*

Ռուս կառավարութեան աւանդական քաղաքականութիւնը արար աշխարհին յայտնի է. բոլոր բացարձակ միապետներու ամբոխային տգէտ ու բիրտ ուժին վրայ կոթնած արշաւող աշխարհակալութեան ձգտումն է այդ։

Որո՞ւ յայտնի չէ համասլաւական իւթոբին. Պոլսոյ չքնաղ նաւահանգիստին տիրապետելու դարաւոր այրող տենչը, Ռուս քաղաքագէտներու Հայաստան համեղ պատառին համար չարունակ թուքերնին կուլ տալը. ու վերջին պատերազմութիւն այդ ամենուն, Բիւզանդական կայսրութեան նման դուցէ անկէց ալ աւելի մեծ պետութեան մը գերագոյն թովիչ հեռապատկերը։ Որուն իրականացումէն յետոյ ճերմակ ցարերը կիսասուածներ պիտի ըլլային, ամբողջ աշխարհը անտեսապէս և քաղաքականապէս իրենց վասալները դառնային նաբոլիոնական երազով մը թերեւս. Եւրոպան միայն ցարերու շառաւիղներով կառավարուէր, ողջ աշխարհը ռուսական քնութով վայելէին, բօրերը իրենց խաչն ու թուրը շլցած ուղղափառ հաւատը—այն է ցարիզմի պաշտամունքը—տանէին ամբողջ երկրագունդին վրայ տարածելու, և իլբրումն ամենայն խայտառակութեանց թուական մը բանային որպիսին էր վայրենիներու դէպի Եւրոպա արշաւելու ժամանակը, հռոմէական հզօր պետութիւնը առաթուր կոխկռտելով։ Ու այս վախը գրեթէ բոլոր եւրոպական ժողովուրդներու սրտին մէջ բոյն դրած է, տեւակ մը տարատամ սարսափ դէպի ռուսական հակազդեցութիւնը և վայրենութեան յետադարձ հարուածը եւրոպական քաղաքակրթութեան գլխուն։

Զգենք պետական շահերու հակառակութիւնը, նախանձը եւ Եւրոպական հաւասարակշռութեան հաւանական խանգարումը. որուն պաշտպանումին համար ժողովուրդները անմոռնչ հեւ ի հեւ կը տգան միլիթարիզմի սոսկալի բեռին տակ, այդ բնազդական վախը պիտի թոյլ չի տար ռուսական չափազանց տարածում մը. վասնզի այդ կը լինէր մինչեւ այսօր արուն քրտինքով ձեռք բերուած քաղաքակրթութեան գերեզմանը փորել, ո՛չ իմ կարծիքով այդ չէ կարող պատահիլ։

Նոյն իսկ ռուս կառավարութիւնը իր ապէտ, կիսավայրենի, խառնիճաղանճով անընդունակ է այդպիսի հսկայական գործ կատարելու, հակառակ պարագային կազմալուծուելով բզիկ բզիկ պիտի ըլլար։

Ուրեմն ինձի անհաւանական կը թուի որ եւրոպական պետութիւնները թոյլ տան որ Ռուսաստան հանդարտօրէն Հայաստանին տիրանայ քանի որ այդ առաջին քայլը կը լինէր ցարիզմի ահարկու յառաջացման։

Արդ այն պատճառաբանութիւնը թէ անհրաժեշտ է աշխատիլ նախ ցարիզմը տապալել, ապա հեշտ կը լինէր հայկական ազատագրութիւնը անոր աւերակներուն վրայ կանգնիլ, քանի որ բուն պատճառը վերցած կըլլայ ճիշդ չէ ու կը համարձակիմ ըսել քաղաքական սխալ մը թէպէտեւ մաքիավէլական արհեստէն շատ չեմ հասկնար։

Մեր ընկերվարականները՝ որոնք չափազանց յոյսեր տածելով Կովկասեան գործաւորներու յարաբերաբար քիչ ժամանակի ընթացքին մէջ ցոյց տուած ընկերվարական յեղափոխական ուղղութեամբ հսկայաքայլ յառաջդիմութեան վրայ, Էնգէլսի տեսակէտը որպէս պատերազմական աղաղակ կուզեն հնչեցնել եւ որպէս քաղաքական միակ բանաւոր գաղանանք մեզ ներկայացնել կը կամին, այնքան ալ հաստատուն հիմերու վրայ յենուած չերեւիր։

Զաւեն

Ցերիխ (Շարունակ'լի)

ՆԵՐԿՍԾ ԵՒՐՈՊԱՆ ԵՒ ԹՈՒՐՔԻՍԱՆ

Մակեդոնական յեղափոխական մարմինը Սելանիկի դէպքերէն վերջը, երկու ամիսի չափ լռելէն յետոյ կրկին ապստամբութեան դրօշը բարձրացուց։

Ճնշարժումի ընթերցողները անկասկած համարներէն կիմանան որ այսօր դրեթէ ամբողջ Մակեդոնիան կրակ ու բոցի մէջ է. կռուի դաշտը ելած զինուած Մակեդոնացիներու թիւը հազարներու կը հասնի, և եթէ այսպէս շարունակուի տասնեակ հազարներն ալ պիտի անցնի։

Նախորդ շարժումներու ատեն Մակեդոնացի հրոսախումբերու և թուրք զինուորներու միջև միայն թուական կռիւներ տեղի կ'ունենային, իսկ այսօր այդպէս չէ. Մակեդոնացիները իրենց ընդհարումներուն պատերազմի կերպարանք կուտան, քաղաքներու վրայ կը յարձակին, կը գրաւեն, պատերազմական յարմար դիրքեր կը բռնեն, իրենց ապահովցնելու համար թրքական գիւղեր կայրեն, թշնամի ստորը զինաթափ կ'ընեն. մէկ խօսքով կ'ընեն այն ամէնը, ինչ որ պէտք է պատերազմը երկարատև դարձնելու և ապստամբներու կացութիւնը ապահովելու համար։

Թուրք կառավարութիւնն ալ քնած չէ, ան ալ մեծ քանակութեամբ և աւելի մեծ խմբերով զօրքեր կը զրկէ ապստամբները շուտով ջախջախելու համար, քանի որ դեռ Եւրոպան անտարբեր կը գտնուի, ու կ'ստիպէ ապստամբութիւնը օր առաջ խեղդել։

Թուրքիա կ'աճապարէ ապստամբութիւնը խեղդել, որովհետև վաղը պայմանները կրնան փոխուիլ և Եւրոպան սոսկալի ըլլայ մրջմտել ու կրկին մեծ պատառ մը բրցնել խարխուլ Թուրքիայէն։ Մեծ եղեռնը սկսուած է Մակեդոնիոյ մէջ, ու եւրոպական դիւանագիտութիւնը անտարբեր հանդիսատես է այդ եղեռնին. արդեօք եւրոպական անտարբերութիւնը պիտի յաղթէ՞, թէ Մակեդոնացիներուն դիմադրական ուժը և կորովը։ Այդ ապագան պիտի ցուցնէ։

* *
*

Երկու ամիս է որ Մակեդոնացիները կը կռուին և ինչպէս ըսինք, այս անգամ այդ կռիւը պատերազմի կերպարանք ընդունած է. սակայն Եւրոպան միջամտելու արամադրութիւն չի ցուցներ։ կը կարծենք այս երեւոյթը հայերուս համար մեծ ու չջնջելի օրինակ մը պիտի ըլլայ համոզելու համար, թէ այսօրուան Եւրոպան բոլորովին տրամադիր չէ Թուրքիոյ ներքին գործերուն խառնուիլ ի նպաստ անոր հպատակ քրիստոնեաներուս։ Թերեւս խառնուի երբ Մակեդոնացիները աւելի երկար ատեն կռուին. Ռուսիա որ Մակեդոնիոյ պաշտպանը կը կարծուի, ներքնապէս, բոլորովին անտարբեր կեցած է. թէեւ այս օրերս անոր հիւպատոսներէն երկրորդ մը թուրք զինուորէ մը գնդակահարուեցաւ։ Ուրիշ ատեններ, երբ ապստամբութիւններ տեղի ունենային ու ռուս պաշտօնեայ մը ալ սպանուէր, Ռուսիա առանց այլեւայլութեան պատերազմ կը հրատարակէր Թուրքիոյ դէմ, բայց այսօր կը բաւականանայ միայն յանցաւորներու խստիւ պատժուիլը պահանջելով։ Ի՞նչով բացատրել ռուսական այս անտարբերութիւնը. արդեօք անո՞վ որ եւրոպական միւս պետութիւնները իրեն կը հակառակին, թէ ինք ներքին վտանգաւոր կացութեան մը մէջ գտնուելով չի յանդգնիր պատերազմի բռնուիլ։ Կրնայ ըլլալ և այն որ Ռուսիա կուզէ որ Թուրքիս ապստամբները ճնշելու մէջ չափազանցութիւններու դիմէ, ամբողջ Եւրոպան իր դէմ գրգռէ և Ռուսիոյ ու Աւստրիոյ քարթ պլանշտան Թուրքիան ջնջելու և Մակեդոնական խնդիրը կարգադրելու համար։

* *
*

Եւրոպայի Մակեդոնիոյ հանդէպ բռնած դիրքը մեզ կոտրիպէ շրջահայեաց ըլլալ։ Համբերութիւն ունենալ, մանաւանդ որ երկրէն եկած տեղեկութիւնները կը փաստեն թէ թուրք կառավարութիւնը ամեն պատրաստութիւն տեսած է հայերը շարժումը ընելու պարագային իսկոյն կոտրածով մը խեղդել շարժումը։

Ասով ժենք չենք ուզեր ըսել որ մեր յեղափոխականները ձեռքերը ծալած պիտի նստին. ընդհակառակը ամեն կերպ պիտի աշխատին ժողովրդին ձեռքը զէնք տալ, կուսակցութիւնը աւելցնել զանազան պատահարներու դէմ պաշտպանուելու համար, որոնք Թուրքիոյ մէջ սովորական երեւոյթներ են. բայց պէտք է խուսափիլ ոեւէ ապստամբական շարժումէ, քանի որ Եւրոպան դեռեւս հանդէպ Մակեդոնացի ապստամբներու նպաստաւոր դիրք չէ բռնած, քանի որ Մակեդոնական խնդիրը դիւանագիտական սեղանի վրա չէ դրուած։

Իհարկէ փափագելի էր որ

մենք ալ Մակեդոնացւոց չափ պատրաստ ըլլայինք, մենք ալ անոնց պէս նպաստաւոր դիրք մը ունենայինք, բայց քանի որ չունինք, մեզի կը մնայ զգոյշ ըլլալ մեր սակաւաթիւ ուժերը շատ սուղի ծախել, և զանոնք գործածել այն մրցոցին երբ հարիւրին գոնէ մէկ քանի տոկոս յաջողութեան յոյս կայ։ Դոյութեան կռիւին մէջ յաղթանակը վայելելու կամ չկորսուելու միակ պայմանը, ուժերը պայմաններուն յարմարցնելու մէջ կը կայանայ։

Կէս

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

— o —

ԳԻՏՆԱԿԱՆ ՄԸ

Այնքերնիդ լոյս Հայեր, լոյս աչխարհ եկաւ մի գիտնական ևս, որը թագն ու պսակը պէտք է կազմի հայ, ոչ իսկական, իլէկ սոցիալիստներին։ Դա Ֆիլիպէցի Անդրէաս Յակոբեանն է, որը, գեռ երէկ, իր ընկերվարական սկզբունքներին դաւաճան ելով։ «Շարժում»ին էր աչխատակցում, բայց պոչը արորվելուց յետոյ իլէկի նման մի ոստիւնով ցատկեց ու ընչաւ իր նմանների գիրկը, ու նրանց օրգան «Լերածնութիւն» թերթի 8 րդ. թիւ մէջ «Տգէտ մը» խորագրով մի յօդուածով հրատարակեց Վարդօի հասցէին, ուր ասէտ, ապուշ և այլն ածականներ կան։ Կարդացէք, և զմայլեցէք, մանաւանդ որ յօդուածը չարունակելի է։

«Այծերի քոսոտն է կատաղումս» ասում է հայկական առածը. մենք էլ կասենք որ Սոցիալիստներից՝ Յակոբեանի նման քոսոտներն են կատաղում, երբ դրանց պոչը տրորում ես։

Յակոբեանի նման խլէկների անպատկառութեան չափը չկայ. երբ դրանք տրամադրված են, իրենց չրմբռնած վարդապետների և գիտնականների ասածները կրկնել անընդունելի կերպով և հասարակութեան ներկայանալ իբրև կիսանկաններ։ Բաւական է որ այդ անպատկառութիւնը նկատեցիր. էլ Աստուած ազատի քեզ։ Անցեալները այդ Գրբանդօմանը, որի գլխում ամէն բան կայ. բացի գիտութիւնից և սոցիալական հարցերը ըմբռնող իրական ուղեղից, մի պատասխան էր գրել մի յոյն թերթի, ու, չը գիտեմ ինչու, իրեն թոյլ էր տուել և «Շարժում»ի մասին մի քանի յիմարութիւններ դուրս տալ։

Յակոբեանի քաւսային և ջրալի վիճակում գտնվող ուղեղի այդ «Շարժում»ին ուղղած յիմար արտադրութեան մենք պատասխանեցինք քաղաքավարի ոճով. որոշեցինք «Շարժում»ի դաւանանքը և նկատեցինք Գիտնականի. Յակոբեանի անհամեստութիւնը, իր յօդուածին կցելով խմբագրական մի նկատողութիւն։ Ու հիւանդ Գրոնդօմանը կատաղեց. իր տկար տեղին դիպանք։ Աստուած բարի ազատում տայ. թէև յոյսը քիչ է...

Խմբ.

ՎՐԻՊԱԿ

«Շարժում»ի անցեալ թիւին Դ. երեսի, Դ. սիւնակի վերջին բաւը «ուսանողները» պէտք է ըլլայ «ուսուցիչները»։

ԹԱՏԵՐԱԿԱՆ

Վաղը գիշեր, Թիկայի պարտէզին մէջ տեղի պիտի ունենայ Պապաեանին նպաստի ներկայացումը։

Խաղն է՝

ՎԵԶՈՒՅԻ ԱՒԱԶԱԿԱՊԵՏԸ

առամ — դրամատի, ինչպէս նաև պարեր ու երգեր։

Հայ բեմին այս խղճամիտ վաստակաւորին նիւթական դոյզն քաջալերմ մը ընելու առիթը ահա կը ներկայանայ թատերասէր հասարակութեան, որ անշուշտ չպիտի թերանայ։

ՆԵՐԿԱՅ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

Երէկ խրագրութիւն եկաւ մի ծերունի հայ, որի 18-19 անրեկան որդին, առանց հօրը մի բան յայտնելու, գուլկար երիտասարդների հետ միանալով, առանց այլևայլութեան, ճամբայ է ընկել դէպի Մակեդոնիա թուրքերի հետ կռուելու համար։

Անցեալ օր էլ մի միջնակարգ դպրոց աւարտած երիտասարդից նամակ եմ ստանում. որից իմանում եմ թէ ինքը որոշել է անպատճառ կամ Հայաստան գնայ կռուելու, կամ Մակեդոնիա, որով եւև այլևս անկարող է դիմադրել թուրքերի հետ կռուելու իր տենչին։

Երկու երեք տարիէ որ մի հարուստ ամեն կերպով ապահով դեռահաս երիտասարդ հոգի է հանում Հայաստան գնալու, հսկաստակ պարագային սպառնում է իր արիւնը թափել Մակեդոնիայի համար։

Այս երիտասարդները նմուշներ են մեր երեք դասակարգերից. մին հարուստ է և սիրտը ուզածի պէս կարող է ապրիլ, բաւական է որ հրաժարվի սպասաւորական ձգտումներից։

Միւսը նորահաս ընդունակ ինտելիգենտ է, որը կարող է առաջ գնալ և իրեն համար անհատական լաւ ապագայ պատրաստել։ Երրորդը իր պատուով ապրող էսնաֆի զաւակ է, յիշածս ծերունու, որ նոյնպէս կարող է իր հօր ձեւով ապրիլ։

Չորրորդ դասակարգի, այսինքն հայ գ/ուղացիների մէջ բազմաթիւ են Հայաստան գնալու և կռուելու ցանկութիւն ունեցողները։

Այս բոլորը ցոյց է տալիս որ ազատամարտական զաղափարը հետզհետէ խորանում է ձգում հայ ժողովրդի բոլոր խաւերի մէջ և հեռու չէ այն օրը երբ հայ ժողովրդի ամէն խաւը, բացի սոցիալ դէմոկրատներից ի հարկէ, իր բազմաթիւ ներկայացուցիչները կը տայ մեր ազատագրութեան գործին։

Մեր յեղափոխական կազմակեր-

ՓՇԵՐ ՈՒ ՎԱՐԴԵՐ (4)

ՆՈՒԷՐ Ս. Զ.ԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

Գաղափարեանի «ազգասիրութիւնը մնոպոլ էք դարձրլը լուցկիի ագդեցութիւն ունեցաւ Շուտեանի վրա. Նա չորացած վառօդի պէս բռնկվելով, առարկեց իր հարուստ ու թուխ մազերով գլուխը չարժելէն.

—Ա՛յ, պարոն Գաղափարեան, ֆըրազներով մի աչխատեցէք խեղդել այն, ինչ որ կայ ձեր սրտում։ Մենք ազգասիրութիւնը մնոպոլ չենք դարձրել եւ չենք ուզում դարձնել. եւ դրան իրը փաստ կարող է ծառայել հէնց այս ժողովը։

Համեցէք, ասպարէզը բաց է. հայ յեղափոխութիւնը շատ մեծ ու դժուարին գործ է. նա պէսպէս ու մեծ քանակութեամբ ուժերի պէտք ունի։ Բայց չեմ հաւատում որ դուք այդ ասպարէզի մէջ մտնէք. որովհետեւ այնտեղ փարիզյա չկայ. լրագրական գովեստներ չեն շռայլվի։ Այդ ասպարէզը բացի դրամականից եւ ուրիշ զոհողութիւններ է պահանջում, իսկ դուք անընդունակ էք. ոչ միայն դուք այլեւ բոլոր այս պարոնները։ Եկամուտի տոկոսն անգամ ձեզ վրա սարսափ ազդեց։ Եւ այդ վաստակոդութեան նշանը դուք ուզում էք խեղդել։ բռնութիւն մեծ խօսքով։

Ժողովական ինտելիգենտները, իրենց ամբողջ լիբերալութեամբը հանդերձ, սոսկացին այդպէս ազատօրէն յայտնված կարծիքից։ Գաղափարեանը գոյն տուեց եւ գոյն առաւ. նա մի վայրկեան դիտեց իր միւս ընկերներին, որոնց դէմքերը ծամուել էին ագիտատորի դառն ճշմարտութիւն յայտնող խօսքերից. բժիշկը մեքենաբար գրպանից հանել էր ջերմաչափը։ ինժինէրը սեղանի վրա դրված մատիտի եւ թղթի հետ էր խաղում։ Կատակասէր յեղափոխականը բժիշկի ջերմաչափը նկատելով, իր խօսքը ուղղելով նրան, ասեց.

—Պարոն բժիշկ, ինչի՞ ջերմաչափը հանեցիք, Շուտեանը ջերմ չունի. Նա իր խօսքերը նորմալ վիճակի մէջ յայտնեց։

—Այո, միջատեց Գաղափարեանը, այո, պարոն Շուտեանը անորմալ վիճակի մէջ է գտնվում. միայն այդ տեսակ վիճակում կարելի է մեզ նման մարդկանց հետ այդ լեզուով խօսել։ Նա եթէ ջերմ չունի, գոնէ ջերդային է. ինձ յեղափոխական ասպարէզ է հրաւիրում. կարծես թէ յեղափոխական լինելու համար իրանից պէտք է արտօնութիւն խնդրեմ։ Այսպէս են մեր բոլոր յեղափոխական գործիչները. մարդկանց հետ վարվել չը գիտեն. կոպիտ են. եւ յիտոյ ասում են որ մարդ չի մօտենում գործին։

—Այո, պարոն Գաղափարեան, մենք յեղափոխականներս զուցէ կոպիտ ենք, բայց կեղծ չենք։

—Օֆ, դուք հետզհետէ աւելի վիրաւորական դիրք էք բռնում, բարի գիշեր, պարոններ, ես կարծեցի թէ կարող եմ ձեզ օգտակար լինել եւ դրա համար եկայ. բայց ինչպէս տեսնում եմ այստեղ օգտակար ոչ մի գործ չի կարելի կատարել։

Այս խօսքերից յետոյ Գաղափարեանը գլխարկը վերցրեց, նրան հետեւեցին եւ միւս լիբերալ ինտելիգենտները. ու բոլորը միասին դուրս եկան ժողովատեղից։

Շուտեանը ժողովականների դուրս գալուց յետոյ դարձաւ տան տիրոջը եւ իր կատակաբան ընկերոջ.

—Տեսա՞ք, այս մարդկանց հետ ժողով էիք ուզում անել. սպասում էիք, հաւատում էիք որ դրանք յեղափոխութեան համար ո եւ է զոհողութիւն կանեն։ «թէ սուրբը լմնի զօրութիւնը ես գիտեմ» Դրանցից բան դուրս չի գայ եղբայր. ի զուր ժամավաճառ ենք լինում։ Դրանք դիակնացել են։ Հասարակական տեսակէտով զէրօներ են. հանրային ոչ մի ցուլ արձագանք գտնել չի կարող այդ փողի. դիրքի. եւ կանանց գերի մարդկանց սլտերում։ Միանգամ երբ խրվում են կեանքի ցեխի մէջ. էլ չեն կարողանում դուրս գալ, ընդհակառակը աւելի խորն են թաղվում։ Եւ դրանց հետ է որ պէտք է խիստ լինել. դրանց հանդէպ պէտք է անողոք լինել, որովհետեւ դրանք ֆրազեօլութիւնով. իրենց դ/րքով, իրենց կեղծ կրթութիւնով մտնում են նորաբոյս ինտելիգենտ տարրի մէջ եւ նրանց էլ թունաւորում դէպի հասարակական ցաւերը անտարբերութեան թոյնով։ Վիրաւորվում են. ոչ այդ ֆիլիստրները, փարիսեցիները վիրաւորվել անգամ չգիտեն. վատգի են, թուլամորթներ են. Այդ գաղափարեան կոչվածը դեւասանութիւն արաւ. Ձեռք քաշեցէք դրանցից. մի բան միայն ալխատեցէք միշտ դրանց դիմակազերծ անել նոր սերնդի առջեւ։

Հայ ժողովուրդը իր գործը ինքը կը տանի. իր արքանդից կը ծնի մարդիկ իր դատը պաշտպանելու համար։ Արդէն ծնել է այդ տեսակ մարդիկ եւ վաղը աւելի շատ կը ծնի։ Որոշել պէտք է մարդկանց, սնորոշութիւնը ամենանվաստակար երեւոյթն է ընկերային կեանքի եւ յարաբերութիւնների մէջ, մանաւանդ այս տեսակ պատմական պարագաներում, երբ ժողովուրդները կռիւ են յայտարարում իրենց ճնշողների դէմ, ուր վարանումը անորոշութիւնը կարող է շատ մեծ վտանգներ պատճառել։ Այդ անորոշ տիպերը կրիտիկական վայրկեաններում հաւատարիմ մնալով իրենց հարազատ նկարագրին, ետ կընկրկեն, յուսախաբութիւն եւ յուսահատութիւն սփռելով ամեն կողմ։

Վնասը այնքան մեծ կը լինի. որչափ մեծ է այդ անորոշ տիպերի ժողովրդականութիւնը, ձեռք բերած ժողովրդային կեանքի խաղաղ վիճակում։

Սովորական կեանքի մէջ, պարզ անհատը, որը ընդունակը չէ թափանցելու մեր ինտէլիգենտների հոգու խորքերը, այդ Գաղափարեան կոչվածի լիբերալ մտքեր արտայայտող խօսքերը լսած միջոցին միթէ կարո՞ղ է հասկանալ որ այդ մարդը կեղծ է. ժողովրդով բոլորովին չի հետաքրքրվում. եւ ազատամիտ է, մարդասէր է, հայրենասէր է միայն խօսքով. միայն արտաքուստ, ու միայն այն ժամանակ երբ նրա բթացած խիղճը ցնցող բան չկայ, երբ ներքանից զոհողութիւն պահանջող չկայ։

Մեր լիբերալների վրա ժամանակ վատնելը ժամավաճառութիւն է. ներքանք խելք ունեն, զարգացում ունեն, տեսնում են ժողովրդի վիճակը, ընբռնում են թէ ինչ պէտք է անել, եւ երբ անտարբեր են, պատճառը այն է որ անզգայ են, դիակնացած են։

ՎԱՐԴՕ

(Շարունակելի)

պութիւնների վրայ պարտք է ընկնում ուշի ուշով դիտել մեր այդ թարմ ուժերին և նրանց համար յարմար գործեր գտնել, որպէսզի ընդանք ստիպված չը լինին իրենց դէպի թուրքը ունեցած զօրեղ ատելութեան բաւարարութիւն տալու համար այնպիսի քայլեր առնել, որոնք ոչ մի օգուտ չեն կարող բերել հայ ժողովրդային գործին։

Վ.

ԿԱՐԵՒՈՐ ԼՈՒՐ

Ռուսաստանէն մեզ կը հաղորդեն թէ ռումանական «Իզվիվերսէլ» թերթի մէջ հրատարակուած է որ Գալաթաթ քաղաքի մէջ սպաննուած է Կարապետ Մարտիրոսեանը. Պ. քաղաքի մէջ գտնուած Գաշնակցութեան պատկանած 28 անտուկ ապրանքը ծախողը։

Սպաննողը չէ ձերբակալուած։

Անցեալները հաղորդած էինք որ գողցուած ապրանքներէն մէկ կարեւոր մասը դեռ երկու տարի առաջ եւ գրաւուած էր, մէկ մասին ալ փոխարժէքը գլխաւոր յանցաւորին աջակցողէն գանձուած կր։ Ինչպէս կերեւի Պոլսոյ Կ. կոմիտէն, որուն կը վերաբերէր այդ ապրանքը ու անոր յանձնուած է եղեր գործին քննութիւնը, չէ գոհացեր միայն նիւթական կորուստը ապահովելով այլ և որոշեր է մահով պատժել գլխաւոր յանցաւորը, որ յանդգնած էր յեղափոխական կազմակերպութեան մը վստահութիւնը ի չարը գործ դնել ու իրեն յանձնուած ապրանքը, ծախել ու փախչիլ։

Վաղը երեկոյ ի նպաստ տիար Պապեանի պիտի ներկայացուի ըստ խընդրանաց թատերասիրաց հոչակաւոր Կլօթէի ՖԱՈՒՍՏ ողբերգութիւնը։

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Էջմիածնի Սինոդի անդամութենէն հրաժարական տուած են տեղապահ Արիստակէս եպիսկոպոս, Մակար Բարխուդարեան և Յուսիկ եպիսկոպոսները նաև Աշոտ վարդապետը։ Մնացած է միայն Մխիթար վարդապետը, որ Կաթողիկոսի քարտուղարին մտերիմն է։

—Տփխիսէ Պոլիս եկած յուլիս 16 թուակիր նամակներ կը ծանուցանեն թէ՝ ներքին կործոց նախարարէն հեռագիր եկած է որ Էջմիածնի և զանազան եկեղեցիներու, վանքերու կալուածները ու հանքերը քննթրախով վարձու չի տան, այլ սպասեն նախարարութենէն գալիք պաշտօնագրերուն, ծանուցանելով որ այս պատուէրի հակառակ կնքուած համաձայնութիւնները անվաւեր պիտի համարուին տէրութեան առջև։

—Կսուի թէ հայ եկեղեցական կալուածներուն արժէքը 115 միլիոն ռուպլու կը հասնի, որը և կ'ուզէ Ռուսիան յափշտակել։

—Պոլսոյ մէջ շատ մը եպիսկոպոսներ, որոնք Էջմիածնի միաբաններ են փափագ յայտնած են խորհրդակցութիւն մը ընելու Էջմիածնի մասին տարածուած շատ մը շփոթ լուրերու մասին։

—Էջմիածնայ քովիկը, եկեղեցապատկան գիտինի մը վրայ սկսեր են ռուսական վանք մը շինել։ Ռուս կառավարութիւնը մեծ փութով հայկական կէդրոններու մէջ ռուս եկեղեցիներ կը շինէ։

—Տփխիսէն «Մանզումէ»ի կը գրեն թէ եկեղեցական կալուածներու գրաւման լուրը առնելուն պէս կաթողիկոսը շտապեր է Էջմիածին վերադառնալ։

Կարեւոր թեմերուն մէջ խորհրդակցութիւններ կը կատարուին և պատգամաւորութիւններ կերթան Էջմիածին, տրուելիք պատասխանը որոշելու համար։

Թէեւ Կաթողիկոսի հրաժարման մասին լուրեր տարածուեցան, բայց այդ լուրերը դեռ ճշդուած չեն և միայն լրագրական տարաձայնութիւններ կը հարուցանեն։

—Էմիրնէի մէջ բանտարկուած հայերէն տաս հոգի անպարտ արձակուեր են։

—Պատր. փոխանորդը երեկ մեկնեցաւ Վառնայէ դէպի Պուրգաս։ Թաղ. խորհուրդին աչքը լոյս. սնտուկին բերանը թող բանայ։

—Ինչպէս կերեւի, թաղ. խորհուրդները սկսած են տարտափիլ Պատր. փոխանորդին ներկայութենէ։ Կը լսենք թէ Սոֆիայի թաղ. խորհուրդը հրաժարեր է իմանալով որ Պատր. փոխանորդը ի մօտոյ հոն պիտի այցելէ, մինչ դեռ անտուկը անոր առջի այցելութեան միջոցին հոգեսպառ վիճակի հասեր է։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կառավարութիւնը յիշատակագիր մը պատրաստելով մակեդոնական խնդրի մասին, յանձներ է Սոֆիայի մէջ գտնուող մեծ պետութիւններու ներկայացուցիչներուն։

—Շաբաթ օր, ճաշէն վերջ, Սոֆիայի դպրոցներէն մէկուն մէջ Սոֆիայի քաղաքացիներ ժողով մը կազմեր են ի նպաստ Մակեդոնիոյ, ուր որոշում տրուեր է ամեն կերպ աջակցիլ Մակեդոնացի ապստամբներուն։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Սպաննուած ռուս հիւպատոսին այրին ամուսնուն և իրեն Թրքական շքանշանները ետ դարձուցեր է Թուրք կառավարութեան։

—Բրիլէբի ապստամբներուն թիւը 5000ի կը հասնի, որոնք բոլորը միասին 25000 թուրք զօրքի հետ կատաղի կռիւ մը ունեցեր են։ Երկու կողմէն ալ մեծ կորուստներ կան։ Թուրք կառավարութիւնը օգնութեան զօրք կը ղրկէ։ Կռիւը դեռ կը շարունակուի։ Մանրամասնութիւններ կը պակսին։

Օգոստոս 2ին ապստամբները Վէլէսի քովերը Սելանիկէն Կրասոսկո գացող զինուորատար թերէնը օղը հաներ են։ Բազմաթիւ մեռեալներ ու վիրաւորեալներ կան։

—Օգոստոսի 3ին ալ ուրիշ զինուորատար թրէն մը Օղը հաներ են Կարա-Հուլու և Ախմատով կայարաններուն մէջ տեղը։

—Նոր տեղեկութիւններու համաձայն թուրք զօրքերը ապստամբներէն ետ գրաւեր են Գրուչօվօ և Քիչէվօ քաղաքները։ Քաղաքին մէջ գտնուող Պուլկարները անձնատուր չեն եղած, չը նայելով որ Սուլթանը Էքզարքի միջոցաւ խոստացած է ներել, և և կը շարունակեն փողոցներուն մէջ կռուիլ։

—Մանասթիր թուրքերը շատ գրգռուած են և հեռագրով Սուլթանէն խնդրած են որ իրենց ղէնք տրուի որպէսզի զօրքերուն հնա մրասին պուլկար հրոսախումբերուն դէմ կռիւ մղեն։

—Պլեւս Իւսկիպէն թրէնով զօրք ղրկելը դադրած է։

Արեւելեան երկաթուղիներու վարչութիւնը կառավարութենէն գնացքներու համար գրաւական պահանջեր է։ Հակառակ պարագային Սելանիկի և Իւսկիպի գիշերային թրէններու երթեւեկը պիտի դադրեցնէ։

ՌՈՒՍԻԱ

Ռուս բարձրագոյն շրջանակները չափազանց գրգռուած են Թուրքիոյ դէմ հիւպատոս Ռոստկովսկիին սպանման պատճառով։

—Պոլսոյ Ռուսական դեսպանին կառավարութեան կողմէն յայտարարուած է որ Սև ծովեան նաւատորմիղի մէկ մասը Թուրքիոյ ջուրերը պիտի ղրկուի։

—Արտաքին գործոց նախարարը Ռոստկովսկիի կնոջ խորհուրդ տուած է Թուրք կառավարութենէն ընդունիլ իր ամուսնոյն գլխակինը։

ՖՐԱՆՍԱ

Քանի մը օր առաջ Բարիզի գետնահարկ երկաթուղիին գընացքին մէկուն բոլոր ուղեւորները ծխահեղձ եղեր են վագոններու հրդեհուելուն պատճառով։ Զոհերուն թիւը առ այժմ 90 հոգիի կը հասնի։

Նախագահ Լուպէն զանազան վեհապետներէ ցաւակցական հեռագիրներ ընդունած է։ Ի Միջի այլոց և Սուլթանէն որ իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ այդչափ շատ մարդերու կորուստին առթիւ։ Վա՜յ գիտի Համիտ, դուն ա՜յ կ'ղգացուիս եղեր մարդոց կորստեան հանդէպ։

ԴԻՒՐԱՄԱՏԶԵԼԻ ՊԱՏՄԱՆՆԵՐՈՎ

Տէր եւ Տիկին Գայեան կընդունին թոչակաւոր հայ պատանիներ, կուսան անոնց հայկականին հետ Զուիցերիական առողջ դաստիարակութիւն, կը պատրաստեն զանոնք իրենց տարիքին եւ ընդունակութեան յարմար դասընթացքներու քաղաքիս վարժարաններուն մէջ, կապահովեն ընտանեկան խնամք եւ գոհացուցիչ յաջողութիւն։

Մանրամասնութեանց համար անյապաղ դիմել առ

Յ. Գայեան
47 Թանկերսբրաս
Պալ (Սուիզ)

ՄՅԱՅԻ ՆԵՐԿ

ՀՐԱՇԱԼԻ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ

Դիմեկ Պ. Ա. Զարպհանեկեանի
Վառնա Պուլկարիա)

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԿՐԹԱՏՈՒՆ

Լօզան, Զուիցերիա
Երկ որդ տարի

Բ. տարեշրջանի դասախօսութիւնները կսկսին Սեպտ. 1/14ին։

Արեւելեան կամ հայկական կրթատունը կընդունի 10-20 տարեկան աշակերտներ, որոնց կուտայ, ծնողքներու բաղձանքին համեմատ, գիտական, գրական, առեւտրական կամ արհեստագիտական առողջ ու լուրջ կրթութիւն մը, ներդաշնակօրէն և սերտիւ միացած ազգային հիմնական կրթութեան հետ։ Հայաշաւերտներուն կաւանդուին, և այս պառանց ոչ է կճարուիր, հայերէն լեզու, հայ մատենագրութեան պատմութ. եւայլն։ Ընտանեկան կեանք։

Կարելի է նաեւ օգտուիլ տեղական հանրածանօթ դպրոցներէն։

Կրթատան տարեթուշակը, հակառակ ընծայուած բազմաթիւ բարեան առաւելութիւններուն, «անօրինակ» կերպով աժան է։

Կրթատան յայտագիրն ամէն ուզողի կը ղրկուի։

ՏՆՕՐԷՆ
Մ. Նաշպանեան

Տօքթ. ի գիտութիւն համալսարանական մասնաւոր-ուսուցիչ

Հասցէ՝
Լօնժրէ 1.
Լօզան, —Սուիս

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна